Ռեյ Բրեդբերի

Մահն ու աղջիկը

Հեռու հեռվում, անտառներից ու լեռներից այն կողմ ապրում էր մի պառավ։ Իննսուն տարի ապրում էր փակված ու չէր բացում դուռը ոչ քամու, ոչ անձրևի, ոչ գող ճնճղուկների և ոչ էլ բոկոտն տղաների առաջ։ Հենց որ մեկը դիպչում էր պատուհանների փակ փեղկերին, նա իսկույն գոռում էր.

— Հեռացի՛ր այստեղից, Մահ։

— Ես Մահը չեմ,— ասում էին նրան։

Իսկ նա պատասխանում էր.

— Մահ, ես ճանաչում եմ քեզ, դու այսօր զուգվել ես աղջկա պես։ Բայց քո պեպենների տակ ես տեսնում եմ ոսկորներդ։

Կամ էլ մի ուրիշն էր ծեծում դուռը։

— Ես տեսնո՛ւմ եմ քեզ, Մահ,— գոռում էր Պառավը։— Մի սրա՛ն նայեք, հյո՛ւսն է դարձել։ Իսկ իմ դուռը երեք կողպեքով և երկու սողնակով է փակված։ Կպչուն թղթով ծածկել եմ բոլոր ճեղքերը, վառարանի ծխնելույզը լիքը լցված է փոշով, լուսամուտների փեղկերը ծածկված են սարդոստայնով, իսկ հաղորդալարերն էլ կտրատել եմ, որ հանկարծ հոսանքի հետ չմտնես ներս։ Ես հեռախոս էլ չունեմ, այնպես որ քեզ չի հաջողվի գիշերվա կեսին ինձ քնից հանել ու հայտնել իմ մահվան ժամը։ Ականջներս բամբակ եմ խցկել, խոսեսչխոսես միևնույն է, քեզ չեմ լսում։ Լսեցի՞ր, կճատ։ Դե կորի՛ր այստեղից։

Եվ որքան որ հիշում էին իրենց փոքրիկ քաղաքի բնակիչները, միշտ էլ այդպես էր եղել։ Անտառներից այն կողմ ընկած այս հեռավոր վայրի մարդիկ անընդհատ խոսում էին նրա մասին, իսկ երեխաները, չհավատալով հեքիաթներին, երբեմն գալիս էին, ձողերով բարձրացնում տանիքի կղմինդրները և իսկույն լսում Պառավի վայնասունը. «Շո՛ւտ չքվիր այստեղից, սևավոր հոգեառ»։

Խոսում էին նաև, որ Պառավը պիտի հավերժ ապրի։ Իսկապես, Մահն ինչպե՞ս պիտի մտներ նրա տունը։ Այնտեղ եղած բոլոր հին մանրէներն արդեն վաղուց ձեռ էին քաշել Պառավից ու գնացել էին հանգստի։ Իսկ նոր մանրէները, որոնք (եթե

հավատանք լրագրերին) համարյա ամեն ամիս սուրում էին երկրով մեկ, ամեն անգամ նոր անուններով, ոչ մի կերպ չէին կարողանում ներս խցկվել քարաքոսի, սպանդի փնջերի միջով, ծխախոտի տերևների ու գերչակի թփերի արանքով, որ դրված էին ամեն մի դռան առաջ։

— Նա բոլորիցս շատ կապրի,— ասում էին մոտակա քաղաքի բնակիչները։

— Ես բոլորիցդ էլ շատ կապրեմ,— ասում էր Պառավը, մթության և մենակության մեջ պասյանս բացելով հատուկ խաղաթղթերով, որ վաճառում են կույրերի համար։

Տարիներն անցնում էին, և արդեն ոչ ոք՝ ոչ փոքրիկ տղան, ոչ աղջնակը, ոչ թափառաշրջիկը, և ոչ էլ ազնիվ ճամփորդը չէին ծեծում նրա դուռը։ Տարին երկու անդամ նպարավաճառը, որն արդեն ինքը յոթանասունից անց էր, տան շեմին էր դնում դեղին առյուծներով և կարմիր սատանաներով զարդարված պողպատյա տուփեր, որոնց մեջ ամեն ինչ կար՝ սկսած թռչունների կերից, վերջացրած կարկանդակներով, իսկ ինքը գնում էր աղմկոտ անտառը, որը ձգվում էր մինչև Պառավի տան պատշգամբը։ Եվ, պատահում էր, որ այդ ուտելիքը մի շաբաթից ավելի մնում էր այնտեղ, արևը տաքացնում էր, իսկ լուսինը՝ հովացնում, ու ոչ մի մանրէ էլ կենդանի չէր մնում։ Հետո, մի գեղեցիկ օր, ուտելիքն անհետանում էր։

Ամբողջ կյանքում Պառավը մի բան էր միայն անում՝ սպասում էր։ Եվ սպասում էր զգուշությամբ, ինչպես ասում են՝ ականջը սրած, մի աչքով քնում էր, մյուսով ամեն ինչ տեսնում։

Այնպես որ, երբ նրա կյանքի իննսունմեկերորդ տարում օգոստոս ամսվա յոթերորդ օրը անտառից դուրս եկավ արևախանձ մի պատանի ու կանգ առավ Պառավի տան դիմաց, դա չզարմացրեց նրան։

Պատանու հագուստը սպիտակ էր ձյան պես, որ ձմռանը շրշյունով իջնում է տանիքներից և շերտշերտ ծածկում քնած հողը։ Պատանին եկել էր ոչ թե ավտոմեքենայով, այլ ոտքով կտրել էր երկար ճանապարհ, բայց նրա տեսքը թարմ էր ու գեղեցիկ։ Նա չէր հենվում ցուպին և գլխարկ էլ չէր դրել։ Չէր վախենում, որ արևը գլուխը կայրի։ Եվ անձրևից էլ չէր թրջվել։ Իսկ ամենակարևորը՝ հետը ոչինչ չուներ, բացի կանաչ հեղուկով լի փոքրիկ սրվակից։ Ու թեև նա տարված էր այդ Սրվակով, բայց այնուամենայնիվ զգաց, որ մոտեցել է Պառավի տանը, և գլուխը բարձրացրեց։

Պատանին չդիպավ դռանը, այլ դանդաղ պտտվեց տան չորս կողմը, որպեսզի Պառավն զգա, որ ինքն այստեղ է։

Հետո նրա հայացքը, որ ռենտգենյան ճառագայթների պես թափանցում էր պատի միջով, հանդիպեց ծեր կնոջ հայացքին։

— Օ՛յ,— ցնցվելով, ճչաց Պառավը, որն այդ ժամանակ ցորենի ալյուրից թխված բլիթը բերանին ննջել էր։ — Դո՛ւ ես։ Ես գիտեմ, գիտեմ, թե ում կերպարանքն ես հիմա ընդունել։

— Ո՞ւմ։

— Հասած սեխի պես վարդագույն դեմքով այն պատանու։ Բայց դու ստվեր չունես։ Ինչո՞ւ չունես։ Ինչո՞ւ։

— Մարդիկ վախենում են ստվերներից։ Դրա համար էլ իմ ստվերը թողել եմ անտառի այն կողմում։

— Ես չեմ նայում, բայց ամեն ինչ տեսնում եմ...

— Օ՜,— հիացած բացականչեց պատանին։— Ինչպիսի՜ ձիրքով եք օժտված...

— Ես օժտված եմ դռան ետևում ինձ պահելու մեծագույն ձիրքով։

— Ես շատ հեշտությամբ կարող եմ ձեզ հաղթել,— ասաց պատանին, հազիվ շարժելով շրթունքները, բայց նա լսեց։

— Դու կպարտվե՛ս, կպարտվե՛ս։

— Իսկ ես սիրո՛ւմ եմ հաղթել։ Դե ինչ... Ես հենց շեմին կթողնեմ իմ այս սրվակը։

Պատանին տան պատերի միջից էլ զգում էր նրա սրտի արագ բաբախյունը։

— Սպասի՛ր։ Իսկ ի՞նչ կա այդ սրվակի մեջ։ Ես իրավունք ունեմ հարցնելու, թե ինչ են թողնում իմ տան շեմին։

— Լավ,— ասաց պատանին։

— Դե շուտ, ասա։

— Այդ սրվակի մեջ,— ասաց նա,— առաջին գիշերն է և առաջին օրը այն ժամից հետո, երբ լրացավ ձեր տասնութ տարին։

— Ի՞նչ...

— Դուք լսեցիք իմ ասածը։

—Գիշերը և օրը... երբ լրացավ իմ տասնութ տարի՞ն։

— Այո։

— Սրվակո՞ւմ։

Նա վեր բարձրացրեց դեռատի կնոջ մարմին հիշեցնող կլորավուն սրվակը։ Սրվակն իր մեջ էր ամփոփում աշխարհը ողողած լույսը և հուրհրում այնպես թեժ ու կանաչ, ինչպես վագրի աչքերի ածուխները։ Պատանու ձեռքերում սրվակը մերթ հավասար լույս էր տալիս, մերթ անհանգիստ թրթռում։

— Չե՛մ հավատում,— ճչաց Պառավը։

— Ես սրվակը կդնեմ այստեղ ու կգնամ,— ասաց պատանին։— Առանց ինձ փորձեք խմել մի թեյի գդալ կանաչ միտք, որ լցված է այս սրվակի մեջ, ու կտեսնեք, թե ինչ կլինի։

— Դա թույն է։

— Ո՛չ։

— Երդվիր մորդ անունով։

— Ես մայր չունեմ։

— Իսկ ինչո՞վ կարող ես երդվել։

— Ինձնով։

— Ախր ես իսկույն շունչս կփչեմ... Դա՛ է քո ուզածը։

— Դուք միայն հարություն կառնեք ի մեռելոց։

— Բայց չէ որ ես մեռած չեմ։

Պատանին ժպտաց։

— Մի՞թե։

— Սպասի՛ր։ Թող հարցնեմ ինքս ինձ։ Դու մեռե՞լ ես։ Մեռե՞լ ես դու։ Եվ ընդհանրապես դու ապրե՞լ ես։

— Օրը և գիշերը, երբ լրացավ ձեր տասնութ տարին,— ասաց պատանին։— Լավ մտածեք։

— Դա այնքան վաղուց է եղել։

Ասես մկնիկ շարժվեց պատուհանի տակ, որն այնպես ամուր էր փակված, ինչպես դագաղի կափարիչը։

— Խմեք, և ամեն ինչ ետ կգա։

Նորից պատանին բարձրացրեց սրվակը և այնպես շրջեց, որ արևի ճառագայթներից շողշողաց հազարավոր կանաչ բույսերից քամած հյութի պես։ Ու թվում էր, թե հուրհրում է կանաչ արևի պես հանդարտ ու թեժ, ու թվում էր, թե փոթորկվում է անզուսպ ու մոլեգնած ծովի պես։

— Դա ձեր կյանքի ամենալավ տարվա գեղեցիկ օրն էր։

— Ամենալավ տարվա,— շշնջաց Պառավը իր պատուհանների փեղկերի ետևից։

— Այդ տարի դուք ասես հյութալի խնձոր լինեիք։ Իսկը ժամանակն էր ըմպելու կյանքի բերկրանքը։ Մի կում, և դուք կիմանաք նրա համը։ Ինչո՞ւ չեք ուզում փորձել, հը՞։

Նա սրվակով ձեռքը մեկնեց առաջ ու ավելի վեր, և սրվակը հանկարծ դարձավ հեռադիտակ. որ կողմից ուզում ես նայիր նրան, և կհորդան քեզ վրա այն հեռու հեռավոր ժամանակները, որ վաղուց անցելմոռացվել են։ Եվ շուրջն ամեն ինչ կանաչ է ու դեղին, ինչպես այս կեսօրը, երբ պատանին իր ձեռքում ամուր պահած հուրհրան սրվակով գայթակղում, հրապուրում է ետ դառնալ դեպի անցյալը։ Պատանին թափահարեց լուսեղեն սրվակը, սպիտակ տաք շողերը թիթեռի պես թռան և նվագեցին լուսամուտների փեղկերի վրա, ինչպես անձայն դաշնամուրի սպիտակ ստեղներ։ Թեթև, ասես երազներից հյուսված հրեղեն թևերը դարձան շողեր, թափանցեցին փեղկերի ճեղքերից ներս, կախվեցին օդում և սկսեցին խավարից պոկել մերթ շուրթերը, մերթ քիթը, մերթ աչքերը։ Բայց աչքերն իսկույն անհետացան, մնաց միայն հետաքրքրասիրությունը, որ նորից ալեկոծվեց լույսի շողից։ Այժմ, բռնելով այն, ինչ ինքն ուզում էր բռնել, պատանին հրեղեն թիթեռին պահում էր հանգիստ (միայն

հազիվ թրթռում էին նրա բոցկլտուն թևերը), որպեսզի հեռավոր օրվա կանաչ բուրմունքը փեղկերի միջով հորդի ոչ միայն այդ հին տունը, այլև ծեր կնոջ հոգին։ Պատանին լսում էր, ինչպես է նա արագ շնչում, ինչպես է ճգնում վանել սարսափը և տուրք չտալ հիացմունքին։

— Ո՛չ, ո՛չ, քեզ չի հաջողվի խաբել ինձ,— աղերսեց նա այնքան խուլ, ասես արդեն ծածկվել էր ծուլորեն գահավիժած ալիքով, բայց և շարունակում էր ջրի խոր հատակում թպրտալ, չկամենալով բաժանվել կյանքից։— Դու վերադառնում ես նոր կերպարանքով։ Դու դիմակ ես հագնում, բայց ես չեմ կարող հասկանալ, թե դա ինչ դիմակ է։ Խոսում ես մի ձայնով, որ ես լսել եմ վաղուց, շատ վաղո՜ւց։ Ո՞ւմ ձայնն է դա։ Ահ, միևնույն է։ Եվ հետո, ծնկներիս վրա բացած թղթերն էլ են ասում, թե դու ով ես իրականում և ինչ ես ուզում ինձ հրամցնել։

— Ընդամենը քսանչորս ժամ ձեր պատանեկությունից։

— Դու ինձ բոլորովին ուրիշ բան կտաս։

— Հո ինձ չեմ տա։

— Եթե ես դուրս գամ, դու ինձ կբռնես ու կպահես ցուրտ ու մութ անկյունում, մամուռի վերմակի տակ։ Ես քեզ հիմարացնում էի տարիներ շարունակ։ Իսկ հիմա դու փնթփնթում ես իմ դռան ետևում և նոր ծուղակներ ես սարքում։ Միայն թե զուր ես չարչարվում։

— Եթե դուք դուրս գաք, ես միայն ու միայն կհամբուրեմ ձեր ձեռքը, դեռատի լեդի։

— Մի՛ ասա ինձ այդպես։ Անցածը անցած է։

— Եթե կամենաք՝ ձեր պատանեկությունն իսկույնևեթ կվերադառնա։

— Իսկույնևեթ...— շշնջաց նա։

— Վաղու՞ց էր, որ դուք զբոսնում էիք անտառում։

— Ինչո՞ւ հիշել վաղուց անցածը։ Եվ հետո ես՝ պառավս, չեմ հիշում։

— Դեռատի լեդի,— ասաց պատանին,— դուրսը հրաշալի ամառային օր է։ Այստեղ, ծառերի մեջ, կարծես կանաչ տաճար լինի, ոսկեգույն մեղուները գորգ են հյուսում, չորս կողմը գույնզգույն նախշեր են։ Հին կաղնու փչակից հրեղեն գետի պես ծորում է մեղրը։ Դեն նետեք ձեր մաշիկները և մինչև ծնկները խրվեք վայրի դաղձի

մեջ։ Իսկ այն բացատում դաշտային ծաղիկները... ասես դեղին թիթեռներ լինեն, որ իջել են խոտերի վրա։ Ծառերի տակ օդը զով է ու մաքուր, ինչպես խոր ջրհորում, քիչ է մնում վերցնես ու խմես։ Ամռան օր է, հավերժորեն պատանի ամռան օր։

— Բայց ես ինչպես որ կամ, այդպես ծեր էլ կմնամ։

— Չեք մնա, եթե լսեք ինձ։ Արդար պայման եմ առաջարկում, հաստատ բան եմ ասում ձեզ, ու մենք հրաշալի կհասկանանք իրար՝ դուք, ես և օգոստոսյան օրը։

— Դա ի՞նչ պայման է, և ի՞նչ բաժին կընկնի ինձ։

— Երկար ու երջանիկ ամառային քսանչորս ժամ, սկսած հենց այս վայրկյանից։ Մենք կվազենք անտառ, հատապտուղներ կքաղենք ու մեղր կուտենք, հետո կգնանք քաղաք ու ձեզ համար կգնենք ոստայնի պես բարակ ամառային սպիտակ զգեստ, իսկ հետո գնացք կնստենք։

— Գնա՛ցք...

— Եվ կսլանանք դեպի մեծ քաղաք... որը այստեղից հեռու չէ, մի ժամվա ճանապարհ, այնտեղ կճաշենք և ամբողջ գիշեր մինչև լույս կպարենք։ Ես ձեզ համար կառնեմ երկու զույգ կոշիկ, և մի զույգը դուք իսկույն կմաշեք։

— Ա՜խ, իմ հին ոսկորներ... Ախր ես տեղիցս չեմ կարող շարժվել։

— Դուք ավելի շատ կվազեք, քան կքայլեք, ավելի շատ կպարեք, քան կվազեք։ Մենք կնայենք, ինչպես են աստղերը ցոլում երկնքում, ինչպես է բացվում արշալույսը։ Այգաբացին կզբոսնենք լճի ափին։ Մենք այնքան համեղ նախաճաշ կանենք, որ ոչ ոք այդպիսին կերած չի լինի, և մինչև կեսօր պառկած կմնանք ավազի վրա։ Իսկ երեկոյան կվերցնենք մի մեծ տուփ կոնֆետ, կնստենք գնացք ու կծիծաղենք ճանապարհին, ամբողջովին ծածկված լինելով վագոնի ուղեկցորդի դակիչից դուրս թռած գույնզգույն՝ կապույտ, կանաչ, դեղին թղթերով, իբր թե մենք հենց նոր ենք ամուսնացել, և կանցնենք մեր քաղաքով, չնայելով ոչ մեկի, ոչ մի մարդու վրա, և աղջամուղջին արբեցուցիչ բուրմունքներով լեցուն անտառով կգնանք դեպի ձեր տուն...

Լռություն։

— Ահա և բոլորը,— ասաց Պառավը,— բայց դեռ ոչինչ չի սկսվել։

Եվ հետո հարցրեց.

— Իսկ քո ինչի՞ն է պետք դա։ Դու ի՞նչ շահ ունես։

Քնքշորեն ժպտաց պատանին։

— Սիրուն աղջիկ, ես ուզում եմ քնել քեզ հետ։

Նրա շունչը քիչ մնաց կտրվեր։

— Ես իմ ողջ կյանքում ոչ ոքի հետ չեմ քնել։

— Ուրեմն... դուք պառաված օրիո՞րդ եք։

— Եվ հպարտանում եմ դրանով։

Պատանին հոգոց հանելով, օրորեց գլուխը։

— Ուրեմն, դա ճիշտ է... դուք իրոք պառաված օրիորդ եք։

Եվ նա լուռ ունկնդրեց, բայց տնից ոչ մի ձայն չլսվեց։

Անասելիորեն կամաց, ասես ինչոր մեկը ինչոր տեղ դժվարությամբ պտտեց ջրի ծորակը, և քիչքիչ, կաթիլկաթիլ, հոսեց ջուրը կես դար մոռացության մատնված խողովակից։ Պառավը լաց էր լինում։

— Ինչո՞ւ եք լաց լինում։

— Չգիտեմ,— հեծկլտաց նա։

Վերջապես դադարեց լաց լինել, և պատանին լսեց, ինչպես է նա օրորվում բազկաթոռի մեջ, որ հանգստանա։

— Խե՛ղճ պառավ,— շշնջաց պատանին։

— Ինձ մի՛ ասա պառավ։

— Լավ,— ասաց պատանին։— Կլարինդա։

— Որտեղի՞ց իմացար անունս։ Ոչ ոք չգիտի իմ անունը։

— Կլարինդա, ինչո՞ւ դու թաքնվեցիր այս տանը։ Դեռ այն ժամանակ, վաղո՛ւց, շատ վաղուց։

— Չեմ հիշում։ Ասենք... հա։ Ես վախենում էի։

— Վախենո՞ւմ էիր։

— Տարօրինակ է։ Սկզբում կյանքից էի վախենում, հետո՝ մահից։ Միշտ ինչոր բանից վախեցել եմ։ Բայց դու ասա՛ ինձ։ Ասա ողջ ճշմարտությո՛ւնը։ Երբ իմ քսանչորս ժամը լրանա... դե, լճի ափին զբոսնելուց հետո, այն բանից հետո, երբ գնացքով կվերադառնանք ու անտառի միջով կգանք իմ տունը, դու կուզե՞ս...

Պատանին չէր շտապեցնում նրան, իր խոսքերով չէր ընդհատում։

— ... քնել ինձ հետ,— շշնջաց նա։

— Այո, հազար միլիոն տարի,— պատասխանեց պատանին։

— Օ՛,— հազիվ լսելի ասաց Պառավը։— Այդքան երկա՛ր։

Պատանին գլխով արեց։

— Երկար,— կրկնեց Պառավը։— Ի՞նչ պայման ես առաջարկում, երիտասարդ։ Դու ինձ տալիս ես քսանչորս ժամ ջահելություն, իսկ ես քեզ տալիս եմ իմ թանկագին ժամանակի հազար միլիոն տարին։

— Մի՛ մոռացիր և իմ ժամանակի մասին,— ասաց պատանին։— Ես երբեք մենակ չեմ թողնի քեզ։

— Դու պառկա՞ծ կմնաս ինձ հետ։

— Իհարկե։

— Էհ, պատանի, պատանի։ Քո ձայնը շատ ծանոթ է ինձ։

— Նայիր ինձ։

Եվ պատանին տեսավ, ինչպես կողպեքի անցքից հանեցին բամբակը, ու մի աչք հայացքը գամեց իր վրա։ Եվ ժպտաց պատանին դաշտի արևածաղիկներին ու երկնային աստծուն։

— Ես կույր եմ, ես համարյա բան չեմ տեսնում,— լաց եղավ ծեր կինը։— Բայց մի՞թե Ուիլլի Ուինչեսթերն է այդտեղ կանգնած։

Պատանին չպատասխանեց։

— Բայց, Ուիլլի, դու ասես քսանմեկ տարեկան լինես, յոթանասուն տարի է անցել, իսկ դու բոլորովին չես փոխվել։

Պատանին սրվակը դրեց դռան առաջ, իսկ ինքը գնաց մի կողմ, կանգնեց խոտերի մեջ։

— Կարո՞ղ ես,— նա մի պահ լռեց,— կարո՞ղ ես ինձ այդքան ջահել դարձնել։

Պատանին գլխով արեց։

— Օ՜, Ուիլլի, Ուիլլի, մի՞թե դու ես իրոք։

Նա սպասում էր, նայելով անհոգ ու երջանիկ պատանուն, որի մազերի մեջ և այտերին խայտում էին արևի շողերը։

Անցավ մի րոպե։

— Դե, ի՞նչ ես մտածում,— հարցրեց պատանին։

— Սպասիր,— ասաց նա։— Թող մտածեմ։

Եվ պատանին զգաց, որ այնտեղ, տանը, նա հապշտապ թափ է տալիս, մաղում ողջ հիշողությունը, ինչպես ավազն են մաղում մանր մաղով, բայց թե հիշելու բան չկար՝ միայն մոխիր էր ու փոշի։ Զգում էր պատանին, որ այրվում են նրա քունքերը, իզուր է նա տակնուվրա անում հիշողությունը... մի հատիկ քար չկա ոչ մաղի մեջ, ոչ էլ մաղված ավազի։

«Անվերջ ու անեզր անապատ,— մտածեց պատանին,— և ոչ մի օազիս»։

Եվ երբ մտածեց այսպես, կինը ցնցվեց։

— Տարօրինակ է,— վերջապես շշնջաց նա։— Հենց հիմա հանկարծ ինձ թվաց, որ հազար միլիոն տարին քսանչորս ժամվա, մեկ օրվա դիմաց տալը շատ բարի, արդար և ճիշտ բան է։

— Այո, Կլարինդա,— ասաց պատանին։— Դու շատ ճիշտ ես։

Թրխկացին սողնակները, չրխկացին կողպեքները, և դուռը ճռռոցով բացվեց։ Մի ակնթարթ հայտնվեց ձեռքը, խլեց սրվակն ու անհետացավ։

Անցավ մի րոպե։

Հետո գնդացրային կրակահերթի պես տկտկացին ոտնաձայները։ Շրխկաց ետնամուտքի դուռը։ Վերևում շռինդով բացվեցին պատուհանները, և խլափեղկերը փուլ եկան խոտերի մեջ։ Ահա պառավը հասավ նաև ներքևի պատուհաններին։ Խլափեղկերը մի կողմ թռան տաշեղներ դարձած։ Փոշին ամպի պես դուրս թափվեց պատուհաններից։

Եվ վերջապես կրնկի վրա բացված դռնից դուրս թռավ դատարկ սրվակն ու ջարդուփշուր եղավ՝ զարկվելով քարին։

Եվ պատշգամբում հայտնվեց նա ինքը՝ արագ, ինչպես թռչուն։ Արևն իր ճառագայթները հեղեց նրա վրա։ Ասես բեմում լիներ կանգնած, ասես հենց նոր դուրս ճախրեց մթին կուլիսներից։ Հետո ցած վազեց աստիճաններով և բռնեց պատանու ձեռքերը։

Արահետով անցնող փոքրիկ տղան կանգ առավ ու աչքերը գամեց նրան, հետո սկսեց ետեւ գնալ, լայն չռած աչքերը չկտրելով նրանից, մինչև որ անհետացավ։

— Ինչո՞ւ էր նա այդպես նայում ինձ,— ասաց Կլարինդան։— Ես գեղեցի՞կ եմ։

— Շա՛տ։

— Ուզում եմ ինձ տեսնել հայելու մեջ։

— Ոչ, ոչ։ Պետք չէ։

— Իսկ քաղաքում ես դուր կգա՞մ բոլորին։ Գուցե սա ինձ թվո՞ւմ է միայն։ Գուցե դու ինձ ձե՞ռ ես առնում։

— Դու աննման ես։

— Ուրեմն, ես գեղեցիկ եմ։ Ես ինքս էլ դա գիտեմ։ Իսկ այսօր երեկոյան բոլորը կուզեն ինձ հետ պարել։ Բոլոր տղամարդիկ, իրար հերթ չտալով, ինձ կհրավիրեն պարելու։

— Բոլորը, մեկ մարդու պես։

Եվ արդեն արահետի վրա, որտեղ բզզում էին մեղուները և խշխշում էին տերևները, նա հանկարծ կանգ առավ ու, նայելով պատանու դեմքին, որ հրաշագեղ էր ամռան արևի պես, հարցրեց.

— Օ՜, Ուիլլի, ես ուզում եմ, որ դու միշտ, միշտ քնքուշ լինես. և երբ ամեն ինչ վերջանա, և երբ մենք ետ կգանք այստեղ։ Պատանին նայեց նրա աչքերի մեջ և մատով դիպավ այտին։

— Այո,– ասաց նա քնքշորեն։— Այո։

— Ես հավատում եմ, ես հավատում եմ, Ուիլլի։

Ու նրանք վազեցին արահետով և անհետացան տեսողությունից, իսկ փոշին կախված մնաց օդում. դռները, փեղկերը, պատուհանները լայն բացված էին, և հիմա արևը կարող էր ներս թափանցել, թռչունները կարող էին բույն դնել այնտեղ և ձագեր հանել, ամառային չքնաղ ծաղիկների թերթիկները կարող էին թռչել հարսանյաց անձրևով և գորգի պես պատել սենյակներն ու դեռևս դատարկ անկողինը։ Եվ ամառային զով զեփյուռը ընդարձակ սենյակները լցրեց մի յուրահատուկ բուրմունքով, Սկզբի և Սկզբին հաջորդող առաջին ժամի բուրմունքով, երբ աշխարհը դեռ մաքուր է ու վճիտ, երբ շուրջբոլորը անդորր է ու լռություն, իսկ ծերության մասին ոչ ոք չի լսել անգամ։ Անտառում, ինչոր տեղ, ինչպես արագ բաբախող սրտեր, կտկտացին ճագարների թաթիկները։ Հեռվում շչաց գնացքը և արագարագ ու էլ ավելի արագ սլացավ դեպի քաղաք։